



ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ

Ֆիզիկական անձանց «Ունիվերսալ» ավանդի

Ք. _____

"__" _____ 20 թ.

«Արդյունահանող» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Բանկ», ի դեմս _____

որը գործում է կանոնադրության /լիազորագրի/ հիման վրա, մի կողմից և _____

այսուհետ՝ «Ավանդատու», որը գործում է _____

մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՐԿԱՆ

1.1. Բանկը, ընդունելով Ավանդատուից ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը, այսուհետ՝ «Ավանդ», իրավունք վերապահելով Ավանդատուին ավելացնելու Ավանդի գումարը, պարտավորվում է Ավանդատուին վերադարձնել Ավանդի գումարը՝ ավելացված Ավանդի գումարով, և սույն պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով տոկոսներ վճարել դրամացի:

1.2. Ավանդի գումարը և արժույթը՝ _____ (գումարը թվերով և տառերով)

1.3. Ավանդի տոկոսադրույթը՝ _____ տարեկան: (տոկոսադրույթը թվերով և տառերով)

1.4. Ավանդի տոկոսադրույթը՝ ավանդի գումարի _____ փոխարկման դեպքում _____ տարեկան: (արժույթ) (տոկոսադրույթը թվերով և տառերով)

1.5. Ավանդի տոկոսադրույթը՝ ավանդի գումարի _____ փոխարկման դեպքում _____ տարեկան: (արժույթ) (տոկոսադրույթը թվերով և տառերով)

1.6. Ավանդի վերադարձման ժամկետը՝ "___" _____ 20 թ.

1.7. Ավանդային գործառնությունների կատարման համար Բանկն Ավանդատուի համար բացում է

1. ՀՀ դրամային _____ 2. ԱՄՆ դոլարային _____ 3. Եվրոյով _____

ավանդային հաշիվը: Այն դեպքում, երբ Ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել Ավանդի գումարը, ապա այդ գումարը և հաշվարկված տոկոսները փոխանցվում են ցպահանջ ավանդների հաշվին՝ առանց լրացուցիչ պայմանագրի կամ համաձայնագրի կնքման, և դրանց վրա հետագա տոկոսների հաշվեգրումը կատարվում է ցպահանջ ավանդների համար սահմանված դրույքաչափով, պայմաններով և կարգով:

1.8. Ավանդի տոկոսների վճարում՝ ամիսը մեկ անգամ (յուրաքանչյուր ամսվա _____) ժամկետի վերջում

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Բանկը, նշված ժամկետը լրանալուց հետո, պարտավորվում է վերադարձնել Ավանդատուին Ավանդը՝ պահանջը ներկայացնելու պահին գործող արժույթով: Հաշվարկված տոկոսները Ավանդատուին վճարվում են ՀՀ դրամով:

Եթե Ավանդի վերադարձի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ:

2.2. Ավանդի գումարը կարող է լրացվել պայմանագրի գործողության ընթացքում: Այն դեպքում, երբ Ավանդի գումարը լրացվում է պայմանագրի գործողության ժամկետի վերջին 30 օրվա ընթացքում, ապա լրացվող գումարի տոկոսների հաշվարկը կատարվում է ելնելով 2(երկու) տոկոս տարեկան տոկոսադրույթից:

2.3. Ավանդատուի ցանկությամբ և գրավոր հանձնարարությամբ Բանկը ավանդային հաշվին առկա դրամական միջոցները փոխարկում է Բանկի կողմից որպես տվյալ ավանդ ընդունվող արժույթի (արժույթների), Բանկի կողմից տվյալ օրվա համար սահմանված կանխիկի փոխարժեքով (առանց շեղման)՝ պահպանելով հաշվեգրված տոկոսները, և հաշվառվում է տվյալ արժույթով ավանդային հաշվում՝ սկզբնական Ավանդի պայմանագրի գործողության ժամկետով և պայմաններով, իսկ փոխարկված արժույթի տոկոսները հաշվեգրվում են «Ունիվերսալ» ավանդի՝ Բանկի կողմից համապատասխան ժամկետի համար ամրագրված սույն պայմանագրի 1.4 կամ 1.5 կետում սահմանված տոկոսադրույթով:

2.4. Ավանդի արժույթը փոխարկելիս, փոխարկվում են նաև կուտակված տոկոսները: Բանկի կողմից տվյալ օրվա համար սահմանված կանխիկի փոխարժեքով (առանց շեղման):

2.5. Եթե Ավանդատուն Բանկին դիմում է փոխարկել իր Ավանդի արժույթը մինչև ժամը 15:00, ապա գործարքը կատարվում է նույն օրը, հակառակ դեպքում՝ հաջորդ բանկային օրը:

2.6. Պայմանագրի գործողության ընթացքում Ավանդատուն իրավունք ունի փոխարկել Ավանդի արժույթը Ավանդը ներդնելուց կամ վերջին փոխարկումն իրականացնելուց հետո 90 օրը մեկ անգամ:

2.7. Պայմանագրի գործողության ընթացքում և հետագայում պահպանվում է Ավանդատուի և Ավանդի գաղտնիությունը. տեղեկությունները տրվում են միայն օրենքով սահմանված կարգով:

2.8. Ավանդային հաշվի տնօրինման իրավունքն այլ անձի կարող է փոխանցվել օրենքով սահմանված կարգով հաստատված լիազորագրով:

2.9. Ավանդի կանխիկ մուտքագրումը և ավելացումը հավաստվում է բանկային փաստաթղթով (ստորագրված և կնքված դրամարկի մուտքի անդորրագիր կամ ստորագրված և դրոշմակնքված մեմորեալ օրդեր), առանց որի սույն պայմանագիրը առոչինչ է: Բանկը պարտավոր է, օրենքով սահմանված կարգով, առնվազն երեսներյա պարբերականությամբ Ավանդատուին տրամադրել հաշվի քաղվածք՝ եթե հաշվետու ժամանակահատվածում տվյալ հաշիվը դեբետագրվել (և) կամ կրեդիտագրվել է:

2.10. Ավանդի անկանխիկ ներդնելու կամ ավելացնելու դեպքում (չեկով, վճարման հանձնարարականով, այլ վճարային գործիքով), Ավանդի մուտքագրումը հավաստվում է Բանկի կողմից տրամադրված քաղվածքով: Վերջինս տրամադրվում է ավանդատուին ոչ ուշ, քան ավանդային հաշվի վրա Ավանդի գումարի մուտքագրմանը հաջորդող բանկային օրը:

2.11. Սույն պայմանագրի 2.9. և 2.10. կետերով նախատեսված քաղվածքները՝ Բանկի և Հանախորդի միջև ձեռք բերված համաձայնության հիման վրա, տրամադրվում են

- առձեռն _____
- փոստի միջոցով _____ /hauցt/
- էլեկտրոնային կապի միջոցով _____ /e-mail/

2.11.1. Ավանդային հաշվից ելքագրումների իրականացման դեպքում հաճախորդին տրամադրվում է քաղվածք՝ 2.11 կետով սահմանված պայմաններով:

2.12. Եթե Ավանդը Բանկում ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն սույն պայմանագրի ստորագրման և/կամ կնքման փաստով հավաստում է, որ նա գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով առաջացող հնարավոր անբարենպաստ հետևանքները, և նախընտրում է Ավանդը ներդնել արտարժույթով:

2.13. Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են Ավանդը բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:

2.14. Այն դեպքում, երբ Ավանդը կամ Ավանդի մի մասը, մինչև առաջին փոխարկումը Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Ավանդի վերադարձվող մասի նկատմամբ Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է ցպահանջ ավանդների համար սահմանած դրույթաչափով և կարգով՝ ելնելով Ավանդի սկզբնական գումարին ավելացված գումարի փաստացի ներդրված օրերի քանակից, կատարելով նախկինում վճարած տոկոսների վերահաշվարկ՝ վերադարձվող Ավանդի մասով, իսկ դրա արդյունքում ավել վճարված տոկոսագումարները պահվում են ժամկետային ավանդից, և պայմանագիրը գործում է Բանկի տնօրինության տակ մնացած ժամկետային ավանդի մասով, որի դիմաց տոկոսները շարունակվում են հաշվեգրվել պայմանագրով նախատեսված չափով:

2.15. Այն դեպքում, երբ Ավանդը կամ Ավանդի մի մասը, առաջին կամ հետագա փոխարկումներից հետո Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է ցպահանջ ավանդների համար Բանկի կողմից սահմանված դրույթաչափով և կարգով՝ ելնելով Ավանդի սկզբնական գումարին ավելացված գումարի փաստացի ներդրված օրերի քանակից, կատարելով նախկինում վճարած տոկոսների վերահաշվարկ, որի արդյունքում ավել վճարված տոկոսագումարները պահվում են ժամկետային ավանդից: Սույն հանգամանքները վրա հասնելու դեպքում կողմերի համաձայնությամբ սույն պայմանագիրը համարվում է լուծված, իսկ իրավունքները ու պարտականությունները՝ դադարած:

2.16. Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները, ինչպես նաև ավանդային հաշվին կանխիկ մուտքագրված միջոցները կանխիկ վճարելիս կոմիսիոն վճար չի գանձվում:

2.17. Պայմանագիրը կնքելիս Բանկն Ավանդատուին հանձնում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ԳՅ օրենքով նախատեսված գրավոր ծանուցումը ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:

2.18. Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, Ավանդատուին հասանելիք տոկոսագումարը վճարելիս, համաձայն «Եկամտահարկի մասին» ԳՅ օրենքի, պահում (գանձում) է եկամտահարկի գումարը և այն փոխանցում է պետական բյուջե:

2.19. ԳՅ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում կատարվող փոփոխությունները, որոնց գործողությունը տարածվում է սույն ավանդային պայմանագրի վրա, ենթակա են պարտադիր կատարման, և կողմերը պարտավորվում են ղեկավարվել կատարված փոփոխություններով:

2.20. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

2.21. Ավանդային պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ այդ պահին Բանկում գործող պայմաններով:

Գումարը (թվերով և տառերով) և արժույթը				
Երկարաձգման ամսաթիվը				
Մարման ամսաթիվը				
Ավելացվող ավանդ				
ամենամսյա վճարվող տոկոս				
Ժամկետի վերջում վճարվող տոկոս				
Տոկոսադրույթը (թվերով և տառերով)				
Ստորագրություն	Ավանդատու			
	Բանկ Կ. Տ.			

* Երեք անգամից ավելի երկարաձգումները կկատարվեն պայմանագրի լրացման հիման վրա:

2.22. Ավանդատուն հավաստում է, որ մինչև Պայմանագրի ստորագրումը նախօրոք ծանոթացել է Բանկի կողմից ավանդների ընդունման կարգի դրույթներին և նրանում նշված բոլոր նմուշներին, որոնք փակցված են իրենց համար տեսանելի տեղերում, և լիովին ընդունում է Պայմանագրով ամրագրված պայմանները:

ԲԱՆԿ

Չասցե _____

 Գեռախոս _____

 /ստորագրություն/

ԱՎԱՆԴԱՏՈՒ

Չասցե _____

 Անձնագրի տվյալները _____

 Գեռախոս _____

 /ստորագրություն/